

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ**ԴԻԻԱՆ ՍՈՒՐԲ ԱԹՈՌՈՅ****ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ****ԿԱՐԳԱԼՈՅԾ ՀՈ-ՉԱԿՈՒԱԾ Է Տ. ՊԱՐԵՏ Ծ. ՎՐԴ. ԵՐԷՅԵԱՆ**

Կարգալոյծ հռչակուած է Տ. Պարետ Ծ. Վրդ. Երէցեան:

Տնօրէն Ժողովի միաձայն որոշմամբ եւ Նորին Ամենապատուութիւն Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի տնօրինութեամբ կարգալոյծ հռչակուած է Տ. Պարետ Ծ. Վրդ. Երէցեան:

Տնօրինութեան համար որպէս հիմք ընդունուած է Պարետ Ծ. Վարդապետի՝ Ս. Աթոռոյս կարգաց եւ կանոնաց հանդէպ դրսեւորած անհաւատարիմ ընթացքը եւ յատկապէս «Կովերու պարտէզ» կալուածի համաձայնագրի վերաբերեալ անոր կատարած շարք մը խարդախութիւնները եւ խաբեբայութիւնները:

Կարգալոյծ եկեղեցականը յետ այսու կը դասուի աշխարհականներու կարգին՝ իր ինչիկ Երէցեան աւագանի անունով:

ԴԻԻԱՆ Ս. ԱԹՈՌՈՅ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ**ՏՆՕՐԷՆ ԺՈՂՈՎԻ**

Ս. ԱԹՈՌ, ԵՐՈՒՍԱԿԷՄ, 12 ՄԱՅԻՍ, 2023

12 Մայիս, 2023-ին հրատապ հրաւիրուած Տնօրէն Ժողովը իր խոր մտահոգութիւնը յայտենց Մայիս 11-ին սոցիալական կայքերու միջոցաւ շրջանառութեան մէջ դրուած, ապա շարք մը Յորդանանեան եւ Պաղեստինեան օրաթերթերու մէջ լոյս տեսած այն լուրի առնչութեամբ, ըստ որում Յորդանանի Հաշիմական Թագաւորութիւնը եւ Պաղեստինեան կառավարութիւնը որոշած են սառեցնել Երուսաղէմի Հայ Պատրիարք՝ Ամեն. Տ. Նուրհան Արք. Մանուկեանի պատրիարքական ճանաչումը:

Առաւել զարմանալին եւ մտահոգիչն այն է, որ այս լուրը շրջանառութեան մէջ դրուեցաւ «Կովերու պարտէզի» խնդրի հիմնական պատասխանատու Կալուածոց տեսուչ՝ նախկին Պարետ Ծ. Վրդ. Երէցեանը պաշտօնէն հեռացնելէ եւ Տնօրէն Ժողովի կողմէ անոր կարգալոյծ հռչակելու եւ վանքէն արտաքսելու որոշումէ ետք:

Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւնը եւ Տնօրէն Ժողովը իրենց կարելին կ'ընեն անվթար պահելու Հայ Եկեղեցւոյ եւ համայնքի շահերը:

ԴԻԻԱՆ ՏՆՕՐԷՆ ԺՈՂՈՎՈՅ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ
Ս. ԱԹՈՌ, ԵՐՈՒՍԱԿԱՆ, 13 ՄԱՅԻՍ, 2023

13 Մայիս, 2023-ին հրաւիրուած արտահերթ Միաբանական ժողովը, որուն կը մասնակցէին Սուրբ Երկրի մէջ ծառայող միաբան հայրերը, իր խոր մտահոգութիւնը յայտնեց Մայիս 11-ին հրապարակուած Յորդանանի Հաշիմական Թագաւորութեան եւ Պաղեստինեան կառավարութեան որոշման առնչութեամբ, որով սառեցուած է Երուսաղէմի Հայ Պատրիարք՝ Ամեն. Տ. Նուրհան Արք. Մանուկեանի պատրիարքական ճանաչումը:

Միաբանական ժողովը առաւել մտահոգ է եւ անակնկալի եկած այն փաստէն, որ այս որոշումը կը յաջորդէ Երուսաղէմի Հայ Պատրիարքի եւ Տնօրէն ժողովի երեք կարեւոր եւ վճռական որոշումներու:

1) Պատրիարք Սրբազանը 11 Յունուար, 2023-ին Կալուածոց տեսչութեան պաշտօնէն հեռացուց նախկին Պարետ Մ. Վրդ. Երէցեանը,

2) 6 Մայիս, 2023-ին Երուսաղէմի Հայ Պատրիարքի նախագահութեամբ գումարուած Տնօրէն ժողովը միաձայն որոշմամբ կարգաւոյժ հռչակեց Պարետ Մ. Վրդ. Երէցեանը,

3) 10 Մայիս, 2023-ին անոր արտաքսեց Սրբոց Յակոբեանց մայրավանքէն:

Կարեւոր է շեշտել, որ Պատրիարք Սրբազանը այս որոշումներն առաւ եւ կամ գործադրեց այն բանէ ետք, երբ համոզուեցաւ, որ կարգ մը հարցերու մէջ Պարետ Մ. Վրդ. Երէցեան չարաչար օգտագործած է անոր վստահութիւնը եւ իրագործած է իր խաբեբայ եւ խարդախ գործընթացը:

Նկատի ունենալով վերոնշեալ բոլոր փաստերը, Միաբանական ժողովը միաձայն կը դիմէ Յորդանանի Հաշիմական Թագաւորութեանը եւ Պաղեստինեան կառավարութեանը կոչ ընելով վերանայիլ իրենց որոշումը եւ չեղեալ նկատել այն, որը մեծապէս պիտի նպաստէ Երուսաղէմի Հայ Պատրիարքին՝ առանց խոչընդոտի ապահովելու Պատրիարքութեան եւ հայ համայնքի շահերը:

ԴԻԻԱՆ ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ
Ս. ԱԹՈՌ, ԵՐՈՒՍԱԿԱՆ, 6 ՅՈՒԼԻՍ, 2023

6 Յուլիս, 2023-ին, համաձայն Կանոնադրութիւն Ընդհանուր ժողովոյ Միաբանական Ուխտին Սրբոց Յակոբեանց (Յօդուած 6, Բ.) գումարուեցաւ Միաբանական Ընդհանուր ժողով, մասնակցութեամբ Ս. Աթոռ գտնուող Միաբանութեան անդամներուն, որուն ընթացքին Միաբան Հայրեր, նկատելով եպիսկոպոսներու անմիջական կարիքը Սուրբ Տեղեաց եւ Ս. Աթոռէն ներս՝ կատարեց Եպիսկոպոսական թեկնածուներու արժա-

նաւորութեան քուէարկութիւն:

Միաբանական Ընդհանուր Ժողովը Նորին Ամենապատուութիւն Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի եւ Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպս. Ղարիպեանի կողմէ ներկայացուած Եպիսկոպոսական չորս թեկնածուներէն գաղտնի քուէարկութեամբ ընտրեց Հոգշ. Տ. Թէոդորոս Ծ. Վրդ. Զաքարեանը եւ Հոգշ. Տ. Կորիւն Ծ. Վրդ. Բաղդասարեանը՝ արտօնելով անոնց Եպիսկոպոսական ձեռնադրութիւնն ու օծումը:

Եպիսկոպոսական թեկնածուներուն այս բարձր առաքելութեան մէջ թող զօրավիգ ըլլան Սուրբ Աթոռոյս հիմնադիր՝ Յակոբոս Տեառնեղբայր Առաքեալը եւ պաշտպան մեծ Սուրբը՝ Սուրբ Գլխադիրը, Սուրբ Աթոռոյս նուիրեալներ՝ Սուրբ Գրիգոր Շղթայակրի, Սուրբ Գրիգոր Պարոնտէրի եւ բոլոր սուրբ հայրերի բարեխօսական աղօթքները:

ԴԻԻԱՆ ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ

Նորին Ամենապատուութիւն Տ. Նուրհան Արքեպս. Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր տնօրինութեամբ կատարուած են նոր նշանակումներ:

Հոգեշնորհ Տ. Գէորգ Աբեղայ Հայրապետեան, ազատուելով Սուրբ Աթոռոյս Գալուստ Կիւլպէնկեան Մատենադարանի տեսչի պաշտօնէն, նշանակուած է Ժառանգաւորաց վարժարանի եւ Ընծայարանի տեսուչ:

Հոգեշնորհ Տ. Ներսէս Աբեղայ Ալոյեան նշանակուած է Գալուստ Կիւլպէնկեան Մատենադարանի նոր տեսուչ:

Քրիստոնեական կարեւոր կրօնական արարողութիւններէն միոյն՝ Լոյսի տօնակատարութեան, Իսրայէլի ոստիկանութեան կողմէ անտրամաբանական սահմանափակումներու վերաբերեալ հոգեւոր պետերու յայտարարութիւնը



**CELEBRATION OF ONE OF CHRISTIANITY'S MOST IMPORTANT RELIGIOUS CEREMONIES
- HOLY LIGHT - TO BE UNREASONABLY RESTRICTED BY ISRAELI POLICE**

This week marks the holiest week in Christianity - Holy Week. We recall the events that led to the crucifixion of Jesus Christ our Lord and Saviour and we remember His glorious resurrection. The celebration of the Holy Light Ceremony, is a great moment that ties the faithful to the light of Jesus Christ. This ceremony has been faithfully taking place in the Church of the Holy Sepulchre for nearly 2,000 years, attracting Christians from around the world.

Each year, the Churches coordinate with the authorities to ensure this ceremony can take place without issue. Notably, last year barriers were imposed by the Israel Authority throughout the Old City that made impossible the access of our local Christian Communities pilgrims from attending the Holy Light Ceremony in the Holy Sepulchre, impeding their freedom to worship and witness the miracle of the resurrection.

This year, after many attempts made in good will, we are not able to coordinate with the Israeli authorities, as they are enforcing unreasonable, and unprecedented restrictions on access to the Holy Sepulchre - more so than last year. These heavy-handed restrictions will limit access to the Church of the Holy Sepulchre and the Holy Light Ceremony. Police are unfairly and inappropriately placing the burden on the churches to issue invitations, while tying the Churches' hands with unreasonable restrictions that will prevent worshippers from attending particularly our local community. This make difficult our coordination with the police.

As we the Greek Orthodox Patriarchate, the Custody of the Holy Land and the Armenian Patriarchate clearly stated in our various statements, we shall continue to uphold the Status Quo customs, and the ceremony will be held as customary for two millennia and all who wish to worship with us are invited to attend. With that made clear, we leave the authorities to act as they will. The Churches will freely worship and do so in peace.

12.04.2023